# Տեղական Լուրեր

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

## Քառամեայ ոճիր մը Պալէ գիւղին մէջ եւ Հալէպի գաղտնի ոստիկանութեան գնահատելի աշխատանքները

## Ի՞ՆՉՊԷՍ ԿՐՑԱԾ Է ԼՐԱՏՈՒՆ ԱՅՍՔԱՆԸ ԻՄԱՆԱԼ

Բանտը այնպիսի տեղ մըն է ուր չարեր և ամէն դասակարգի մարդիկ իրարու կը ծանօթանան։ Կարելի է ըսել որ բանտն առանձին չէր ջանակ մըն է ուր եկողները ոճրագործ, գող, պարտական, և այլազան պատճառներով բանտարկուածներ են. հոն կը հաստատուին նոր բարեկամութիւններ. կը գտնուին երբեմն ընկերներ։ Կը պատահի նոյնիսկ յաճախ, որ արդարութեան հետապնդումէն փախչելով կը գտնուին մարդիկ որոնք ուրիշ մէկ յանձանքով գիտակցաբար կը ձերբակալուին. այսպէսով բանտին մէջ բոլորովին ազատ կ'ըլլան ոստիկանութեան հետապնդումներէն և բանտին մէջ կ'անցնեն որոշ շրջան մը ոստիկանութենէն մոռցուելու համար։

Այսպիսի դէպք մը պատահած էր Օգոստոսի մէջ Մուհամմէտ Հաճ Ահմէտ Էլթաաէմի, մահուամբ սպաննուած էր իր մէկ հակառակորդին, սպաննելէ ետքը ընդունող մարդը բողոքած ըլլալով Մուհամմէտ 6 ամիս բանտարկութեան դատապարտուած էր Հալէպի դատարաններէն։

Հետեւաբար բանտ առաջնորդուած էր իր մեղքը քաւելու համար։

Բանտի մէջ. ըստ սովորութեան Մուհամմէտ ուրիշներու շարքին, ծանօթանայ նաեւ Ք.— ին որ հ օ թ ն ու կէս տարի բանտարկութեան դատապարտուած էր։ Այս վերջինին հետ, Մուհամմէտ կը մտերմանայ միեւնոյն խուցին մէջ ըլլալուն համար։

Դարձեալ ըստ բանտի սովորութեան, Մուհամմէտ կը պատմէ իր կեանքի դրուագներէն նոր բարեկամին ու կը յայտնէ, թէ Պալէ գիւղին բնակիչներէն է և հոն ոճիր մը պատահած է. որը մինչեւ օրս անյայտ մնացած է Ոստիկանութեան և Արդարութեան։ Նոյնպէս յայտնած է թէ այդ ոճիրին հեղինակներէն է սակայն ներկայի իր բանտարկութիւնը անոր համար չէ. այլ մահուամբ սպաննուած ըլլալուն համար 6 ամիս բանտարկուած է. «հոգ չէ աւելի լաւ է» կ'ըսէ Մուհամմէտ իր խօսակցին «հօս այս ձեւով հեռու կ'ըլլամ որեւէ կասկածէ»։

Մուհամմէտի խօսակիցը ուրիշ մէկը չէր եթէ ոչ - Ոստիկանութեան Տնօրէն Իզզէտտին Պէյին ղրկուած նամակին հեղինակը և գաղտնի Ոստիկանապետ Ճէմալ Պէյ Ջէրքէզին տեղակալ անձը, բանտի տնօրէնին սենեակին մէջ։

Ահա այսպէս, տեղեկանալով է որ լրատուն իմացուցած էր խնդիրը ոստիկանութեան։

Ճէմալ Պէյ աւելի լայն ծանօթութիւն քաղած ըլլալով. կը մեկնի բանտէն և կուգայ իր պաշտօնատեղին։ Մութ էր հարցը, կասկածելու առիթներ սակայն իրականութիւն մը կար անպայման։ Ճէմալ Պէյ յուսահատող մէկը չէր. գիտենք այդ և տեսած ենք նախորդ բազմաթիւ դէպքերու ընթացքին։

(Շար. 2) Գրի առաւ՝ ԹՂԹԱԿԻՑ ԺԱՎԷՐ


ՄՕՏ ՕՐԷՆ... ՄՕՏ ՕՐԷՆ..

ՕՐՈՒԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ՝

«Մարիա Տել Գարմէն»

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Ձեր սինեմայի օրը վերապահեցէք

ԳԵՐՄԱՆԻԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Սինեմայի ցերեկոյթին

ԿԻՐԱԿԻ 29 ՆՈՅԵՄԲԵՐ 1953 ԿԷՍՕՐԷ ԱՌԱՋ ԺԱՄԸ 10,15ԻՆ

Սինեմա «ՕՓԵՐԱՅԻ» մէջ

ՈՒՐ ՊԻՏԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԻ ԵՂԱՆԱԿԻՆ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՊԱՒԷՆԸ

ԼՔԵԱԼԸ

(LE BATARD)

Տիէթրիչ



Փայտի և հանքածուխի ֆրանսական արդիական վառարաններ, որոնք համբաւաւոր են իրենց խնայողութեամբ, շատ դիւրամատչելի գիներով կը վաճառուին։

Ազիզիէ, Հայ. Ազգ. Նոր շէնքին մէջ, հեռաձայն թիւ 14268

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ

«Դէպի աղբիւրը լոյսին»

ԿԱՄ

'Տիեզերքի առեղծուածը'

Ուր գիտական և իմաստասիրական փաստերով կ'ապացուցուի Աստուծոյ գոյութիւնը, և կը լուծուի իմաստասիրական այլ և այլ հարցեր։

Բոլորովին արդիական և հաճելի ոճով հեղինակուած գիրք մը որ պէտք է ամէն մար ունենայ։

Գին՝ 225 ս. դահեկան

Ստանալու համար դիմել

Հալէպ.— Մխիթարեան վարժարան, Նամակատուփ 591

Պէյրութ.— Մխիթարեան կեդրոնատեղի, Պուրճ–Համուտ։

Սինեմա Հալէպ

Երկուշաբթի 23 Նոյեմբերէն սկսեալ կը ցուցադրէ ֆրանսական առաջին գունաւոր ժապաւէնը եղող




ՔԱՐՈԼԻՆ ՇԷՐԻԻ

ՍԻՐԱՅԻՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ




Կարդացէ՛ք ՍՈՒՐԻԱ օրաթերթը



ՖԱՔԻՐ—ԱՍՏՂԱԳԷՏ

ՄԱՍՆԱԳԷՏ ՔՆԱՑՆՈՂ ԵՒ ՈԳԵՀԱՐՑ

Քէլլէսէ Պօղոսեան, Կարաժ Խաուլամ

Հեռաձայնի թիւ 12271


ՕԳՆԵՑԷ՛Ք

ԱԶԳ. ԾԵՐԱՆՈՑ ԱՆԿԵԼԱՆՈՑԻՆ

## ՍԱԿԱՐԱՆ

ԹՂԹԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| Տօլար | 356 |
| Սթեռլին | 945 |
| Ֆրանսական 1000 Ֆ. անք | 902 |
| Զուիցերիական Ֆրանք | 82,00 |
| Պելճիքական Ֆրանք | 6,50 |
| Եգիպտական | 850 |
| Յորդանանեան | 915 |
| Տինար | 970 |
| Թրքական | 64.00 |
| Լիբանանեան | 109,50 |

ՈՍԿԻ ԻՐԱՄ

| | |
|---|---|
| Անգլիական | 34,0[illegible] |
| Օսմ. Թիւնարի | 27,30 |
| Օսմ. Րէշատի | 31,50 |